Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 24

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<23>> դեկտեմբերի 2025թ. ք. Երևան

2025 թվականի դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում են հանձնաժողով նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը և հանձնաժողովի անդամ Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1.1 Քննարկվեց՝ «ՆՅՈՒ ԻՆՍՊԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի դեկտեմբերի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի դեկտեմբերի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու

մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, ք. Սևան, Արա Գեղեցիկի փողոց 3 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ տեխնիկական զննության կայանի տարածքների օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և հատակագիծը և տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների ստուգաչափումների դրական եզրակացությունները և տեխնիկական բնութագրերը պարունակող անձնագրերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՆՅՈՒ ԻՆՍՊԵԿՏ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն և 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման: Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և դեկտեմբերի 19-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2025 թվականի դեկտեմբերի 9-ի ԱՍ/25.1/42488-2025 գրությամբ Ընկերությանը տեղեկացվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես առ այն, որ հայտին կից փաստաթղթերում բացակայում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ Ընկերության տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը, ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի հավելվածի ցանկ N 2-ով սահմանված՝ տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող արատորոշման միջոցների տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերի պատճենները և թվային տեսախցիկի առկայությունը հավաստող տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացվել է, որ Ընկերության տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենի բացակայությունը լիցենզավորող մարմնին հնարավորություն չի տալիս ստուգելու Ընկերության ներկայացրած տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 15-րդ կետով սահմանված պահանջներին (լայնություն, երկարություն, մուտք-ելք):

«Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ընկերությանն առաջարկվել է 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել տրանսպորտային միջոցների տեխնիկական գործունեության լիցենզիա տրամադրելու հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Միաժամանակ Ընկերությանը տեղեկացվել է, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Ընկերությունը 2025 թվականի դեկտեմբերի 19-ին ներկայացրել է լրացուցիչ նյութեր, սակայն ամբողջովին չի վերացրել 2025 թվականի դեկտեմբերի 9-ի ԱՍ/25.1/42488-2025 գրությամբ նշված թերությունները, մասնավորապես՝ չի ներկայացրել ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ Ընկերության տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան